ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/117

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.03.2022թ. թիվ 26/26-1/5412-2022 գրությամբ Ա/Ձ Գնել Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.03.2022թ. թիվ 1/18-4/19683-2022 գրության հիման վրա, 30.03.2022թ. թիվ 26/26-1/5412-2022 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Գնել Խաչատրյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Գնել Խաչատրյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Գնել Խաչատրյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Գնել Խաչատրյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/117 ընթացակարգի շրջանակներում 04.04.2022թ. ժամը 09:50-ին և 07.04.2022թ. ժամը 09:26-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.03.2022թ. թիվ 1/18-4/19683-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն իր կարիքների համար գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպել է ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/2 ծածկագրով ՀՀ ՊԵԿ Հարավային մաքսատուն-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի տարածքում ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման գործընթաց, որի արդյունքում ԱՁ Գնել Խաչատրյանը ճանաչվել է ընտրված մասնակից և պատվիրատուն սահմանված կարգով ընտրված մասնակցին ներկայացրել է առաջարկ՝ պայմանագիր կնքելու համար, սակայն ԱՁ Գնել Խաչատրյանը որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու առաջարկից:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/117 ընթացակարգի շրջանակներում 04.04.2022թ. ժամը 09:50-ին և 07.04.2022թ. ժամը 09:26-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/117 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/117 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գնել Խաչատրյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Գնել Խաչատրյանին ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով 21.03.2022թ. ծանուցել է Ա/Ձ Գնել Խաչատրյանին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ա/Ձ Գնել Խաչատրյանը Պատվիրատուին ուղղված 21.03.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2022թ. թիվ 4 որոշմամբ ճանաչվել եմ որպես ընտրված մասնակից, սակայն հրաժարվում եմ պայմանագիր կնքելուց արտերկիր մեկնելու հետ կապված»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.03.2022թ. թիվ 26/26-1/5412-2022 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.03.2022թ. թիվ 1/18-4/19683-2022 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գնել Խաչատրյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Գնել Խաչատրյանին ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 21.03.2022թ. ծանուցել է Ա/Ձ Գնել Խաչատրյանին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ա/Ձ Գնել Խաչատրյանը Պատվիրատուին ուղղված 21.03.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-22/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2022թ. թիվ 4 որոշմամբ ճանաչվել եմ որպես ընտրված մասնակից, սակայն հրաժարվում եմ պայմանագիր կնքելուց արտերկիր մեկնելու հետ կապված»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***<u>եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>***

Ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Գնել Խաչատրյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.03.2022թ. թիվ 26/26-1/5412-2022 գրությամբ Ա/Ձ Գնել Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Գնել Խաչատրյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը: